ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

«____»_____ 20 թ.

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010, Տիգրան Մեծի 4
Հեռ.՝ (37411) 521 877, ֆաքս՝ (37411) 529 753

№ _____

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հկ
նախագահ՝ տիկին Լ. Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի /պատճենի/ տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումից բխող Ձեր հարցադրումներին ի պատասխան տեղեկացնում ենք, որ լրացուցիչ մի շարք քայլեր են ձեռնարկվել 2016թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած վերոնշյալ որոշման պահանջների կատարման առումով. աշխատակազմին հանձնարարվել է մանրամասն ծանոթանալ որոշմանը, տեղեկատվության տրամադրման հարցում առաջնորդվել որոշմամբ սահմանված կարգով: Վարչության պաշտոնական կայքէջում, դիմումի օրինակելի ձևից բացի, տեղակայվել է նաև բանավոր ու գրավոր դիմելու կարգը, մերժման հիմքերն ու կարգը, թարմացվում է նաև հաճախակի տրվող հարցուպատասխանի էջը:

1. Մասնավորապես, 2016թ. հունվարի 1-ից ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչությունում էլեկտրոնային եղանակով ստացվել է տեղեկատվության 4 հարցում:

2. Բոլոր հարցումներին տրվել է գրավոր /էլեկտրոնային/ պատասխան, վերահասցեագրում կամ մերժում չի եղել:

3. Վարչության **spm.am** պաշտոնական կայքը, 2013թ.-ից սկսած, համապատասխան բաժնի միջոցով ցանկացողներին առցանց հարցում կամ դիմում ներկայացնելու և նամակի ընթացքին հետևելու հնարավորություն է ընձեռում: **Հղումը՝ http://spm.am/am/write-letter/**

4. ՊԳԿ վարչության կայքում «Հաճախակի տրվող հարցերի» էջը նույնպես գործում է 2013թվականից, հարցուպատասխանի շրջանակը պարբերաբար ամփոփվում է, թարմացվում ըստ հարցադրումների արդիականության: **Հղումը՝** **http://spm.am/am/volunteer/**:

Հարգանքով՝ **Ա. Սահակյան**

Կատ. Մ. Սարգսյան
Մամուլի քարտուղար
011 566242